ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/11210-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին (Կ-965-20.11.2024,19.03.2025-ԱՌՀ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար.

Առաջարկում ենք «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի՝

1. 2-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետում՝ «ներգրավված» բառից հետո լրացնել «անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի, Միասնական սոցիալական ծառայության «(այսուհետ՝» բառերը, «պետական մարմին» բառերից հետո փակել փակագիծը «)» հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը:

2. 4-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածում 5-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) լիազոր մարմնի և անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնության, այդ թվում՝ տեսչական մարմնի կողմից ներկայացված միջնորդագրի հիման վրա (վարչական ակտի իրավաչափությունը գնահատելու համար).»:»

3. 5-րդ հոդվածով՝ գործող օրենքի 7-րդ հոդվածում լրացվող նոր «5.2»-րդ մասից հանել «դիմումը մուտքագրվում է էլեկտրոնային համակարգ անձի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից, իսկ» բառերը:

4. Նախագծի 7-րդ հոդվածի 12-րդ մասի՝

1) 2-րդ կետում «վերաբերյալ» բառից հետո լրացնել «, եթե մասնագետը ֆունկցիոնալության գնահատման առնվազն երեք վարույթով թույլ է տվել խախտում» բառերը:

2) 3-րդ կետում «լիցենզիայից զրկելու» բառերը փոխարինել «լիցենզիայի գործողությունը դադարեցնելու» բառերով,

3) 7-րդ հոդվածի 15-րդ մասից հետո առաջարկում ենք լրացնել նոր 16-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«16. Սույն հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետով սահմանված միջնորդագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը կարող է դադարեցնել բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը:»:

Ըստ այդմ մասերի համարակալումը վերանայվել է:

4) 7-րդ հոդվածի 19-րդ (լրամշակված 20-րդ) մասում «ծանուցվում» բառի փոխարեն լրացնել «ծանուցում» բառը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկներ չկան:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ